

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,

ՊՐՈՖԵՍՈՐ՝ Կ. Հարությունյան

, 2022թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հասմիկ Սպարտակի Ղաջոյանի «ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ (ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների նյութի հիման վրա)» Ժ.02.07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական ասպիրանտի հայցման ատենախոսության մասին

Տեխնիկական եզրույթների հիմքում ընկած փոխաբերականացման երևույթի համակողմանի ուսումնասիրությունը մեծապես կարևորվում է ժամանակակից լեզվաբանության հարացույցում: Եզրույթի ձևավորման այս միջոցի գիտական հետաքրքրությունը պայմանավորված է այն փաստով, որ ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի զարգացումներն ու փոփոխությունները հաճախ կարող են վերակազմավորել աշխարհի հին մոդելը և ձևավորել նորը: Եվ այս ամենը ոչ միայն դառնում է տարատեսակ մեկնությունների առիթ, այլև գիտական ուսումնասիրությունների համար կուռ հենք է ապահովում:

Ներկա ատենախոսության թեման հետաքրքրական և **արդիական** է ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների համատեքստում՝ տեխնիկական եզրույթների նորովի մեկնաբանության առումով: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել փոխաբերականացումը՝ որպես տեխնիկական եզրույթների ձևավորման միջոց:

Աշխատանքում մասնավորապես կարևորվում է նորաստեղծ տեխնիկական եզրույթների խոսքիմաստային պատկանելության ուսումնասիրությունը, ինչպես նաև բառակազմական այն միջոցների քննությունը, որոնց միջոցով դրանք ձևավորվել են:

Աշխատանքի **գիտական նորույթը** փոխաբերականացման միջոցով առաջացած տեխնիկական եզրույթների իմաստային վերլուծությունը և կարգայնացումն է՝ հիմնված աշխարհընկալման լեզվական պատկերի վրա:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է եզրութաբանության, ինչպես նաև փոխաբերականացման վերաբերյալ տեսական գիտելիքների ուսումնասիրությամբ և համակարգելու կարևորությամբ, իսկ **գործնական նշանակությունը** պայմանավորված է այն փաստով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել լեզվի իմաստաբանության, բառագիտության, գործաբանության, ինչպես նաև տեխնիկական անգլերենի դասընթացներում:

Ատենախոսությունը ներկայացված է հետևյալ կառուցվածքով՝ ներածություն, երեք գլուխներ /իրենց ենթագլուխներով/, եզրակացություն, գրականության ցանկ:

Ներածությունում հիմնավորվում է ուսումնասիրության առարկան, թեմայի արդիականությունը, նորույթը, նպատակը, խնդիրները, տեսական ու գործնական նշանակությունը, նախանշվում են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում որոշարկվում են եզրույթ և բառ հասկացությունները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով և նկարագրվում է տեխնիկական եզրույթների առաջացման և զարգացման ընթացքը: Այստեղ դիտարկվում է նաև արտալեզվական գործոնների դերը տեխնիկական եզրույթների ստեղծման գործընթացում:

Երկրորդ գլուխը նվիրված է փոխաբերությանը և դրա շուրջ կատարված ուսումնասիրություններին: Անդրադարձ է կատարվում փոխաբերականացման միջոցով ձևավորված եզրույթների իմաստային առանձնահատկություններին:

Երրորդ գլխում քննության են ենթարկվում անգլերենում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման միջոցով ձևավորված

եզրույթների իմաստային, խոսքիմաստային և բառակազմական առանձնահատկությունները:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Դրվատելի է ատենախոսի կողմից առարկայի վերաբերյալ արտահայտած բազմազան տեսակետների ներկայացումը: Ատենախոսության դրական կողմերից է այն իրողությունը, որ այստեղ անկհայտ է ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ ատենախոսի քաջատեղյակությունը: Ատենախոսությունն աչքի է ընկնում շարադրանքի պատշաճ մակարդակով:

Այնուամենայնիվ, Հասմիկ Ղաջոյանի ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել հետագա գիտական գործունեության ընթացքում:

1. Ատենախոսության 3-րդ գլխում ներկայացված ենթագլուխները լեզվաբանական տեսակետից ավելի պատկերավոր կլինեին, եթե նյութը ներկայացվեր բառակազմական, խոսքիմասային և **իմաստային** դասակարգման սկզբունքով: Իմաստային դասակարգման մասին ենթագլուխ ներկայացված չէ:
- Հետազոտության ընդհանուր նպատակով պայմանավորված՝ ատենախոսն առաջադրել է մի քանի խնդիր, որոնց թվում՝ *վիճակագրական մեթոդի օգտագործմամբ փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթների խոսքիմասային և բառակազմական միջոցների տրոսային հարաբերությունը ներկայացնելը /տես՝ ատենախոսություն, էջ 6/:* Ատենախոսը ուսումնասիրել է փոխաբերականացման արդյունքում տեխնիկական եզրույթ դարձած 2000 միավոր՝ դիտարկելով դրանք իմաստային, խոսքիմասային և բառակազմական մակարդակներում, սակայն այստեղ նույնպես բացակայում է իմաստային դասակարգման վիճակագրությունը: Ներկայացվել է երկու գծապատկեր՝ միայն

խոսքիմասային և բառակազմական վերլուծության արդյունքում ստացված տոկոսային տվյալները, որոնք, կարծում ենք, հանգեցրել են միանգամայն հասկանալի պատկերի, այն է՝ եզրույթների համակարգում, բնականաբար, մեծ թիվ պիտի կազմեն գոյականները, ապա՝ մյուս խոսքի մասերը, կամ՝ ածանցումն առավել արդյունավետ միջոց է նոր եզրույթների ստեղծման համար, քան բառաբարդումը: Ի դեպ, եզրակացություններ բաժնում ատենախոսը միանգամայն արդարացիորեն տարանջատում է փոխաբերականացման արդյունքում ստեղծված եզրույթների տարբեր իմաստային խմբերը՝ մարդաբանական և ոչ մարդաբանական՝ իրենց ենթախմբերով /հիմք է ընդունվել Բրայսոնի և Մյուլդերի տեսությունները, տես՝ ատենախոսություն՝ էջ 69/: Ցանկալի կլիներ **իմաստային** դասակարգումների արդյունքում ստացված տվյալները ներկայացնել առավել համակարգված և դիագրամների միջոցով՝ դրանք ավելի տեսանելի դարձնելու նպատակով:

2. Ատենախոսն իր կողմից ներկայացված եզրակացություններում նշում է, որ բառակազմական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են *հապավումը, կրճատումը, երկու և ավելի բառերի միավորմամբ նոր բառերի ստեղծումը /մի՞թե սա բառաբարդում չէ/* չեն մասնակցում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված եզրույթներ կազմելու գործընթացին /տես՝ ատենախոսություն, էջ 139, սեղմագիր, էջ 17/: Կարծում ենք, ատենախոսը պիտի հստակեցնե՝ իր կողմից ուսումնասիրված օրինակներում ե՞ն դրանք բացակայում, թե՞ ընդհանրապես:
3. Ատենախոսության մեջ երբեմն հանդիպում է ոչ հստակ շարադրանք և առկա են որոշ տեխնիկական վրիպակներ /տես՝ ատենախոսություն՝ էջ 66, 87, 146/:

Նշված բացթողումները հայեցակարգային չեն և չեն ստվերում աշխատանքի գիտական որակն ու կարևորությունը, որն առանձնանում է տեսական և գործնական նյութի խոր վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով:

Ատենախոսության սեղմագիրը և ատենախոսի հրատարակած հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, ինչն էլ հիմք է տալիս մեզ միջնորդել ԵՊՀ-ում գործող 009 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու Հասմիկ Սպարտակի Ղաջոյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի 2022թ. օգոստոսի 23-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 1):

Նիստին մասնակցել են՝ ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյանը, ք.գ.թ., պրոֆեսոր Հ. Քաջբերունին, ք.գ.թ., դոցենտ Ա. Ալավերդյանը, ք.գ.թ., դոցենտ Ա. Կարապետյանը, ք.գ.թ., դոցենտ Ա. Մինասյանը, ք.գ.թ., դոցենտ Ռ. Գևորգյանը, ք.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, ք.գ.թ., դոցենտ Գ. Բարսեղյանը, մ.գ.թ., դոցենտ Մ. Խառատյանը և ուրիշներ:

23.08.2022թ.

ԲՊՀ անգլերենի ամբիոնի վարիչ՝

ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյան

Հաստատում եմ Գ. Եղիազարյանի ստորագրությունը

ԲՊՀ գիտական քարտուղար՝



Հ. Փիլավջյան